Արձանագրություն N 2-2
ՀՀՔԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/1 ծածկագրով համակարգչի համար սկաների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 04.02.2026թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Շ. Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Լ. Թադևոսյան
Ն. Մակարյան
Ժ. Մելքոնյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Մ. Աբգարյան

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին

(Շ. Գրիգորյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «Մոնիկ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին համակարգի միջոցով ծանուցվել է 02.02.2026թ., առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ արվել է վերջինիս կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. Գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Շ. Գրիգորյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը և գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները «Մոնիկ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

2.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Մոնիկ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Շ. Գրիգորյան

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, գնահատող հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Մոնիկ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Շ. Գրիգորյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------- Շ. Գրիգորյան

Անդամներ՝ ---------- Լ. Թադևոսյան

---------- Ն. Մակարյան

---------- Ժ. Մելքոնյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան